

1
ուլ գլխաւորապէս երևաք մեծ պետութիւններու սահմանադրուիւններու վրայ ձեռք կը բերեն նոյն տէրութիւններու մէջ գործածական ամենէն նոր պաշտօնական հրացաններէն, ու մէկ սահմանէն միւս սահմանը անցնելով՝ ազատորէն կը գործածեն :

Ազնուական սերունդը ունի իր հացկատակներն ու շոյողները, երգիչներն ու բանաստեղծները, ուր որ երթան, այս վերլիներէ կազմուած խումբը կը հետևի իրենց :

Հետեորդ չքախմբին կ'ընկերանան նաև քաջ ու անձնուէր քիւրդ երիտասարդներ ալ, որոնք պաշտօն ունին պաշտպանել ազնուականի անձը յանկարծական պատահարներու դէմ :

Շքախմբի այս անդամները կ'առնուին քիւրդ ցեղապետութեան հասարակ դասակարգէն, որոնք իրենց ստանձնած գործին արժանի գործատէր մը դառնալու համար, իրենց բոլոր ջանքերը՝ առանց խնայելու ի գործ կը դնեն, դո՛հացնելու համար ազնուականը :

Ազնուականութիւնը մանաւանդ ցեղապետը՝ կ'երագէ ու կը ջանայ ունենալ այնպիսի նժոյգ մը, որի նման չը գտնուի միւս ցեղապետութեանց մէջ, նժոյգի անունը տարածուելով, բոլոր աշխրաթութիւններէն յարգանքով խօսուի անոր մասին, բարեկամ ցեղապետութեան ազնուականները այդ տեսնելու համար՝ իրեն այցի գան, շողքորդները տասնապատկեն, հարիւրապատկեն անոր գովքը, բանաստեղծները իրենց հանճարով քիւրդ զիւցազներգութեան նիւթ դարձնելով, քաջութեան ու հերոսութեան վերութիւնը ցոլացնեն, ու իրբև հազուադիւս՝ անմահացնեն ձին իր տիրոջ հետ որպէս անբաժանելիներ բոլոր քաջութեան արշաւներու մէջ, ու երգիչները (տէնկպէժ) երգեն :

Մրցակից չունցող արագապայ նժոյգն է միայն որ թշնամու դէմ յարձակուելու ու պաշտպանելու ժամանակ՝ պիտի տանի յաղթութեան մեծ բաժինը, և կամ միջոց տայ որ պահպանուի իր տիրոջ կեանքն :

«Համլտիէ» զինուորական տարազէն զատ որ թիւրք պաշտօնական տարազ է, ցեղապետներն ունին իրենց առանձին